ՄՐՑՈՒՅԹ

Հայտատարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍ «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Գազային սարքավորումների եւ ստորգետնյա գազատարների տեխնիկական շահագործում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի (1 դրույք) թափուր տեղի համար:
Պահանջվող որակավորումը՝ համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն կամ տվյալ մասնագիտության զբաղվածության բնագավառում 5 տարվա աշխատանքային գործունեության փորձ:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.
- դիմում (Ձեւ 1),
- կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք եւ աշխատանքային գրքույկի պատճենը
(առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 4),
- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են 2024 թ. սեպտեմբերի 11-ից մինչեւ սեպտեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-16:00-ն, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում:

Մրցույթը տեղի կունենա 2024 թ. սեպտեմբերի 27-ին՝ ժամը 13:00-ին, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 15-93-81 հեռախոսահամարով: